Քննարկվել և հավանության է արժանացել
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի
«31» 08 2022թ. № 2 նիստում

Հաստատվել է՝
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կոլեգիալ կառավարման խորհրդի «31» 08 2022թ.
N2-22 նիստում, խորհրդի նախագահ՝ Ս.Դավիդյան
/ստորագրություն/

ՀՀ ԿԳՄՍՆ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. <<Չարենցավանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Քոլեջ) որակի ապահովման քաղաքականության նպատակն է սահմանել քոլեջի որակի ապահովման գործընթացներն ուղղորդող հիմնարար կանոնների ամբողջություն:

1.2. Որակի ապահովման քաղաքականությունը տարածվում է քոլեջի գործունեության այն բոլոր ասպեկտների և կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների վրա, որոնք ազդում են կրթական ծրագրերի չափորոշիչների պահպանման և որակի ապահովման վրա:

2. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քոլեջում որակի ապահովման քաղաքականությունը ներառում է.

2.1. քոլեջի ռազմավարության հետևողական իրականացում,

2.2. որակի ապահովման համակարգի արդյունավետ գործունեության ապահովում,

2.3. որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների առավելագույն ներգրավվածության, կարիքների ու պահանջների բացահայտման արդյունավետ մեխանիզմների ներդրում,

2.4. որոշումների կայացման ընթացքում ներքին և արտաքին շահառուների առավելագույն ներգրավվածություն և հետադարձ կապի ապահովման հնարավորության առկայություն,

2.5. տեղեկատվության հավաքագրման ու վերլուծության իրականացում,

2.6. արդի շուկայական պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի բարելավման ապահովում, կրթական ծրագրերի մշտադիտարկման և գնահատման գործընթացների կարևորում,

2.7. ժամանակակից հարափոփոխ միջավայրում գործելու ունակ մասնագետներ պատրաստելու համար բարենպաստ պայմանների ստեղծում,

2.8. քոլեջի աշխատակազմի վերապատրաստման ապահովում, մասնագիտական որակների շարունակական բարձրացում,

2.9. իրականացվող կրթական ծառայություններից ուսումնառողների և այլ շահակիցների բավարարվածության բացահայտում,

2.10. կարիքների և պահանջների բացահայտման համար կիրառվող մեխանիզմների անընդհատ բարելավում,

2.11. համագործակցային, հաշվետվողական, թափանցիկ, թիմային միջավայրի ապահովում,

2.12. քոլեջի զարգացման ծրագրին, ռազմավարական նպատակներին, ծրագրերին, ՀՀ ՈԱԱԿ-ի չափանիշներին և ուղենիշներին համապատասխան որակի կառավարման ներդրված համակարգի անընդհատ բարելավում,

2.13. քոլեջի կողմից իրականացվող կրթական գործունեության վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվության հասանելիության ապահովում:

3. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Քոլեջում որակի ապահովման նպատակներն են՝

3.1. քոլեջում որակի մշակույթի ձևավորումը և որակի ներքին ապահովման մեխանիզմների ներդրումն ու գործադրումը.

3.2. կրթական գործընթացների որակի ապահովման և շարունակական բարելավման աշխատանքներին աջակցելը.

3.3. ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների համակարգումը.

3.4. որակի ապահովման ոլորտում քոլեջի զարգացման ծրագրից բխող խնդիրների լուծման կազմակերպումը:

Քոլեջում որակի ապահովման խնդիրներն են՝

3.5. նպաստել որակի շարունակական բարելավման մշակույթի հաստատմանը և հետագա զարգացմանը քոլեջում.

3.6. ապահովել քոլեջում կրթության որակի մշակույթի ձևավորման համար անհրաժեշտ փաստաթղթային հենք.

3.7. ապահովել որակի ապահովման գործընթացներում ուսանողների, շրջանավարտների, դասախոսների և հիմնական գործատուների ընդգրկվածությունը.

3.8. կրթական միջավայրի և կրթության որակի բարելավման նպատակով մշակել ուսանողների և դասավանդողների՝ կրթական ծրագրերից բավարարվածության և կրթական կարիքների ուսումնասիրման ընթացակարգեր և գործիքակազմ, իրականացնել ստացած կրթությունից գոհունակության, դիտարկումների ու առաջարկությունների բացահայտում, կարիքների վերհանում.

3.9. մշակել արտաքին շահակիցների պահանջները բացահայտող գործիքակազմ, բացահայտել շրջանավարտների որակի վերաբերյալ գործատուների ցանկություններն ու պահանջները.

3.10. համակարգել և վերլուծել ներքին և արտաքին շահակիցներից ստացված արձագանքները.

3.11. համագործակցել Հայաստանի այլ մասնագիտական ուսումնական հաստատությունների նմանօրինակ ստորաբաժանումների հետ, իրականացնել փորձի փոխանակում.

3.12. ապահովել քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի արդյունավետությունը, համագործակցել ՀՀ <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի հետ:

4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Քոլեջը որակի ապահովման գործընթացներում առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով՝

4.1. Քոլեջի ղեկավարությունը, դասախոսական և վարչական կազմը պարտավորվում են իրականացնել որակյալ կրթական ծրագրեր՝ ուղղված շահառուների կարիքների և պահանջների բավարարմանը: Այս նպատակով քոլեջը ապահովում է որոշումների կայացման ընթացքում ներքին և արտաքին շահառուների ներգրավվածություն, ինչպես նաև ստեղծում կարիքների և պահանջների բացահայտման արդյունավետ մեխանիզմներ: Քոլեջի ղեկավարությունը տարածում է թիմային աշխատանքի, լավագույն արդյունքի ձգտման, կարգապահության և ծառայությունների շարունակական բարելավմանը միտված մշակույթ՝ հաշվետվողական, թափանցիկ, մասնակցողական կառավարման միջոցով:

4.2. Քոլեջում որակի ապահովման համակարգը և գործընթացները պետք է ուղղված լինեն նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտկան կրթության բնագավառում ուսումնական գործընթացների կազմակերպման, դրանց բովանդակության, ուսանողներին տրամադրվող կրթական ծառայությունների և կառավարման համակարգի թերությունների բացահայտմանը, շտկմանը, դրանց որակի բարելավման խթանմանը:

4.3. Որակի ապահովման խնդիրները պետք է ձևակերպված լինեն հստակ և բխեն որակի ապահովման գործընթացում քոլեջի նպատակներից:

4.4. Քոլեջում որակի ապահովման գործընթացները պետք է հասանելի լինեն քոլեջի կառուցվածքային բոլոր օղակների շահագրգիռ ներկայացուցիչների դիտարկմանը, ուսումնասիրմանը և հետադարձ կապի ապահովմանը:

4.5. Քոլեջում պետք է կատարվեն ուսումնասիրություններ, որոնց հիման վրա կատարվի վերլուծություն քոլեջում ուսումնական գործընթացի արդյունավետության և կրթական միջավայրի մասին:

4.6. Վերլուծությունները պետք է մատնանշեն քոլեջի ուժեղ և թույլ կողմերը, թերությունները տարբեր մակարդակներում՝ շարունակական բարելավում ապահովելու համար:

4.7. Պետք է ապահովել բարենպաստ միջավայր, որտեղ ուսանողները, դասախոսական և վարչական կազմը իրենց մասնագիտական տիրույթում մասնակցեն որակի ապահովման գործընթացներին և տրամադրեն կարծիքներ ու առաջարկություններ որակի ներքին ապահովման գործընթացների բարելավման նպատակով:

4.8. Պետք է ապահովել քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումների միջև մշտական կապի պահպանումը, յուրաքանչյուրի վրա դրված աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման հարցերում համագործակցային և աջակցող մոտեցումը, ինչը կծառայի որակի ապահովման գործընթացների անխոչընդոտ իրագործմանը և համակարգի բարելավմանը: